ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում. *Երևան, Հայաստան հրատարակչություն, 1989, 358 էջ։*

Չնայած հայ-քրդական փոխհարաբերությունները մշտապես գտնվել են հայ պատմաբանների, քաղաքական և մշակութային գործիչների ուշադրության կենտրոնում, այնուհանդերձ, առ այսօր այդ խնդրին վերաբերող բազմաթիվ հարցեր մնում են չլուսաբանված։ Ավելին, խորհրդային պատմագիտության սկզբունքները թույլ չեն տվել երկու ժողովուրդների առնչությունների պատմությունը վերհանել ամբողջ խորությամբ, որը խոչընդոտել է պատմական բազմաթիվ փաստերի օբյեկտիվ լուսաբանմանը, նպաստել առանձին, այսպես կոչված, «ոչ լուսավոր» դրվագների անտեսմանը։

Վ. Բայբուրդյանն առաջինն է, որն այս հարցը դարձրել է առանձին ուսումնասիրության առարկա՝ նրա աշխատանքը ընդգրկում է XIX դարը և XX դ. սկիզբը, որը և հիմնավորված է հիմնահարցի ամբողջականությամբ։ Երկու ժողովուրդների հարաբերությունների ամենասերտ և ամենաբուռն ժամանակաշրջանը տեղադրվում է պատմական այս փուլում, ուստի և նրա ընտրությունը բնավ էլ պատահական չէ։

Վ. Բայբուրդյանի աշխատությունը գրված է ակադեմիական լուրջ մոտեցումով, աղբյուրագիտական լայն հենքի վրա, ուր շրջանառության մեջ են դրվել նաև հրապարակի վրա եղած բազմալեզու համարյա ողջ գրականությունը և արխիվային նյութերը։ Այն բաղկացած է առաջաբանից, վեց գլուխներից, վերջաբանից, ծանոթագրություններից և համառոտագրությունների ու օգտագործված գրականության (501 անուն) ցանկերից։

Հայ-քրդական լայնակի փոխհարաբերությունները հիմնականում սկիզբ են առնում XVI դ. սկզբից։ Հայտնի է, որ 1514 թ. տեղի ունեցած Ջալդիրանի ճակատամարտից հետո թուրքերը պարսիկների դեմ պատվար ստեղծելու համար սկսեցին Արևմտյան Հայաստանի քրդացման քաղաքականությունը։ XVI դ. առաջին կեսը՝ քրդերի զանգվածային ներթափանցման սկիզբը, միևնույն ժամանակ մեր ժողովրդի տառապանքների և անլուր զրկանքների մի նոր փուլի սկիզբ դարձավ, որը ի վերջո հանգեցրեց մեր հայրենիքի հսկայական մի հատվածի կորստին։ XVI դ. սկսած Օսմանյան տիրապետության ներքո հայ և քուրդ ժողովուրդները կողք-կողքի ապրեցին շուրջ հինգ դար։ Այդ ժամանակաշրջանը, ինչպես նշում է հեղինակը իր գրքի առաջաբանում, երկու ժողովուրդների պատմության ամենամռայլ և դժնդակ ժամանակահատվածներից է՝ հղի ռազմաքաղաքական ողբերգական իրադարձություններով։ Անկասկած, հեղինակը իրավացի է։ Ճիշտ է, Օսմանյան կայսրությունը իր ողջ գոյության ընթացքում իսկապես եղել է միջնադարի ռազմաֆեոդալական ամենադաժան տիրակալություններից մեկը, սակայն, հանրահայտ է, որ բոլոր ժողովուրդները չէ, որ հավասարապես ենթարկվել են նույն հալածանքներին։ Ամենևին չի կարելի հավասարության նշան դնել հայերի և քրդերի միջև, մի բան, որը, հիրավի, հեղինակը հետևողականորեն ցույց է տվել իր գրքում։ Քրդերը Օսմանյան կայսրությունում միշտ էլ օգտվել են հատուկ արտոնություններից, և ոչ միայն առանձնակի ազգային ճնշման չեն ենթարկվել, այլև, ընդհակառակը, իրենք են գլխավորապես ծառայել որպես զենք ուրիշ ժողովուրդներին, հիմնականում հայերին, ճնշելու և ոչնչացնելու գործում, ինչը նրանք դարձյալ ցույց տվեցին XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայկական կոտորածների ժամանակ։

Աշխատության առաջին գլուխը հեղինակը նվիրել է հայ-քրդական հարաբերությունների սոցիալ-քաղաքական և տնտեսական գործոններին։ Սկսելով միջնադարից, նա իրավացիորեն ցույց է տվել, որ քրդական տարրը վաղ շրջանում բուն հայկական լեռնաշխարհում գոյություն չի ունեցել, սակայն ավելացնում է, որ բացառված չէ, որ «VII դարում, արաբական արշավանքների շրջանում, արաբների նոր կրոնը՝ մահմեդականությունը ընդունած քրդական առաջին ցեղերը, արշավող բանակների հետ մուտք գործած լինեն Արևմտյան Հայաստան, հաստատվելով նրա հարավային շրջաններում» (էջ 8)։ Այս կապակցությամբ հարկ է նշել, որ արաբական արշավանքների սկզբին՝ VII դ. 30—40-ական թվականներին, քրդերը դեռևս մահմեդականություն չէին ընդունել։ Քրդերի շրջանում իսլամի տարածման գործընթացը, դատելով եղած աղբյուրների տվյալներով, սկիզբ է առել IX դ., իսկ մուսուլմանության դանդ-

մածային ընդունումը տեղի է ունեցել X—XI դդ.[1]։ Ինչ վերաբերում է քրդերի ներթափանցմանը Հայաստանի հարավային որոշ շրջաններ, ապա դա տեղի է ունեցել ավելի ուշ՝՝ X դ. երկրորդ կեսից, և կրել է մասնակի բնույթ, ինչը ցույց են տալիս ոչ միայն աղբյուրները, այլև լեզվաբանական տվյալները[2]։ Քրդական ցեղերի տեղաշարժերը միջնադարում և հայկական նշված շրջաններում մուտք գործելը ունեին բացի քաղաքականից, նաև սոցիալ-տնտեսական դրդապատճառներ։ Հյուսիսային Միջագետքի տարածքներից նրանց երթը դեպի Հայաստանի հարավային նահանգները այս կամ այն չափով խորացավ, ինչպես ճիշտ նշում է հեղինակը, սելջուկ-մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում (էջ 8), որը, սակայն, դարձյալ չէր կրում զանգվածային բնույթ։

Այնուհետև, անդրադառնալով թուրք-իրանական ռազմաքաղաքական ընդհարումներին, հեղինակը առավել ուշադրություն է հատկացրել 1514 թ. Չալդիրանի ճակատամարտին և դրան հաջորդող ժամանակաշրջանի իրադարձություններին։ Նա մասնավորապես պատմում է այն մասին, թե ինչպես թուրքերը և Սեֆյան Իրանը ձգտում էին իրենց կողմը գրավել քրդերին։ Սակայն քրդերի նկատմամբ պարսիկների քաղաքականությունը արմատապես տարբերվում էր թուրքերի քաղաքականությունից։ Ինչպես ժամանակին նշել է Ն. Ադոնցը, «Պարսիկները՝ Հայաստանի համար պայքարում հաջողության հասնելով, հեռացնում էին քուրդ բեյերին։ Թուրք սուլթանները, սակայն, վարում էին հակառակ քաղաքականություն.. Նրանք հողեր էին տրամադրում քուրդ առաջնորդներին՝ պարսիկների դեմ պատվար ստեղծելու նպատակով»[3]։

Նույն գլխում հեղինակը հանգամանորեն կանգ է առել նաև XVI—XVIII դդ. թուրք-իրանական պատերազմների, դրանց հետևանքների, օսմանյան թուրքերի դաժան քաղաքականության, տնտեսական, քաղաքական ճնշումների և հայ-քրդական առնչություններին վերաբերող հարակից այլ հարցերի վրա։ Նա մասնավորապես ընդգծել է Արևմտյան Հայաստանի հայ գյուղացիության ծանր վիճակը՝ կապված հիմնականում քրդերի կեղեքումների, հալածանքների, գերեվարումների և հայկական հողերի բռնագրավման հետ։ Այդ ամենի հետևանքով XVI դ. սկիզբ առավ արևմտահայության արտագաղթի նոր, թերևս աննախընթաց մի ալիք, որը շարունակվեց ընդհուպ մինչև XX դ. սկզբի հայտնի ողբերգական իրադարձությունները։ Հայերի արտագաղթը բարենպաստ հնարավորություն ստեղծեց այդ շրջաններում քրդական տարրի հաստատման համար։ Առաջին գլխում Վ. Բայբուրդյանը խոսում է նաև քրդական տոհմաբեղային կառուցվածքի և քրդերի դավանանքի մասին։ Նշենք, որ, ինչպես այս գլխում, այնպես էլ ընդհանրապես գրքում չափազանցված է մահմեդականության դերը քրդերի սոցիալ-քաղաքական կյանքում։ Դավանական գործոնը, ինչ խոսք, բավական դեր է խաղացել ազգամիջյան խլրտումների առաջացման, ժողովուրդներին միմյանց դեմ հրահրելու բնագավառում, սակայն իսլամը՝ առանձին վերցրած որպես դավանանք, կրոն միշտ էլ եղել է երկրորդական երևույթ. առաջնայինը էթնիկական գործոնն է։ Բավական է նշել, որ իսլամի տարածողները՝ արաբները, թեկուզ մուսուլմանական ֆունդամենտալիզմի կենտրոններից մեկը՝ Իրանը երբեք կրոնը որպես զենք չեն օգտագործել քրիստոնյա ժողովուրդներին այլակրոնության համար հալածելու նպատակով։ Մուսուլմանության ապամարդկայնացված ձևը կարելի է գտնել միայն թյուրքական էթնիկական միջավայրում։ Իմիջիայլոց նշենք, որ վերջին ժամանակներում տարածված է այն դրույթը, որ քրդերի հետամնացության և ազգային համախմբման բացակայության հիմնական պատճառը իբր մահմեդական կրոնն է։ Անշուշտ, սա միանգամայն անընդունելի և ոչ գիտական տեսություն է. իսլամը երբեք չի խոչընդոտել թե՛ գիտության և թե՛ մշակույթի ու գրականության զարգացմանը, ընդհակառակը՝ միշտ էլ նպաստել է դրան, ինչի վկայությունն են մահմեդական Արևելքի մեզ հասած հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանները, մուսուլմանական գիտությունն ու արվեստը։

---

[1] Տե՛ս А. П. Поладян, Курды в VII—X веках по арабским источникам. Ереван, 1987, с. 73.

[2] Տե՛ս Г. С. Асатрян, О ранних армянизмах в курдском (Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 2, էջ 168—175)։

[3] Մանրամասն տե՛ս N. Adonz, Kurdish Intrusion into Armenia (The New Armenia, vol. XIV, 1922, № 1, San.--Fev., p. 5): Հմմտ. նաև նույն հոդվածի հայերեն թարգմանությունը՝ Ն. Ադոնց, Քրդերի ներթափանցումը Հայաստան (Երեկոյան Երևան, 28. III. 1990)։

Աշխատության երկրորդ գլխում («XIX դ. առաջին կեսի քրդական շարժումները և հայ-քրդական հարաբերությունները») Օսմանյան կայսրության պատմության ընդհանուր հենքի վրա հեղինակը արծարծել է բազմաբնույթ հարցեր, որոնք սերտորեն փոխկապակցված են և միմյանց տրամաբանական շարունակությունն են կազմում։ Օսմանյան կայսրության ռազմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական վայրիվերումների մեջ Վ. Բայբուրդյանին լավագույնս հաջողվել է տալ հայ-քրդական առնչությունների համապարփակ պատկերը։

Հեղինակը հանգամանորեն խոսում է XIX դ. սկզբների ռուս-թուրքական, թուրք-իրանական պատերազմների, հակամարտությունների, XIX դ. 20—40-ական թվականների քրդական հուզումների, հայ-քրդական հակաթուրքական ելույթների և այլ խնդիրների մասին։ Ապա նա առանձնակի ցույց է տալիս քրդական ավազանու և դերբեյությունների գործունեությունը Արևմտյան Հայաստանում։ Նա ընդգծում է, որ «քուրդ դերբեյերի լուծը արևմտահայերի համար հանդիսանում էր ոչ միայն անմիջական լուծ, այլև տնտեսական և ֆիզիկական գերություն, ոչ մի օրենքով չահմանափակվող կամայական ու քմահաճ մի բռնություն» (էջ 83)։ Բացի այդ, Վ. Բայբուրդյանը վերլուծում է Թանզիմաթի ծրագիրը, անդրադառնում քուրդ ավատատերերի կամայականություններին, հակաթուրքական զանազան ելույթներին, դերբեյությունների վերացման և այլ խնդիրների։

Մենագրության երրորդ գլխում («Թանզիմաթի երկրորդ շրջանը և հայ-քրդական հարաբերությունների նոր փուլը») մանրամասն վերլուծվում են հայ-քրդական փոխհարաբերությունները 1853 թ. Ղրիմի պատերազմի ընթացքում և դրանից հետո ընկած ժամանակաշրջանում։ Վ. Բայբուրդյանը միանգամայն ճիշտ է նկատել, որ Եզդանշիրի շարժումից և Ղրիմի պատերազմից հետո Օսմանյան կայսրությունը կտրուկ փոխեց իր քաղաքականությունը քրդերի նկատմամբ։ Բ. դռան հրահանգով կայսրության ղեկավար շրջանները բոլոր միջոցներով սկսեցին սիրաշահել քրդերին, քրդական ավազանուն տվեցին լայն հնարավորություն և մեծ արտոնություններ։ Կենտրոնի թողտվությամբ հայերի դեմ ուղղվեցին քրդական խլրտումներն ու հուզումները, շարունակվեց հայերին պատկանող հողերի բռնագրավումը, թուրքական զենքի միջոցով ամենուրեք սկսվեցին անխնա կողոպուտները, առևանգումները և այլն։ Սուլթանական կառավարության այդ նենգ քաղաքականությանը դիմագրավելու միակ միջոցը, ըստ հեղինակի, արևմտահայությունը տեսնում էր սեփական ուժին ապավինելու և զինված պայքարի ելնելու մեջ։

XIX դ. 50—60-ական թվականներին ողջ կայսրությունում սկսված հակասուլթանական ազգային-ազատագրական շարժման ալիքը ընդգրկեց նաև Արևմտյան Հայաստանը։ Այդ կապակցությամբ Վ. Բայբուրդյանը խոսում է արևմտահայության նկատմամբ օսմանյան կառավարության վարած քաղաքականության, 1863 թ. Հայոց Ազգային սահմանադրության, 1867 թ. «Վիլայեթների վարչության մասին օրենքի», Արևմտյան Հայաստանի ծանր կացության, 60—70-ական թվականներին աննախընթաց վերելքի հասնող քրդերի ավարառությունների, գերեվարումների և զանազան այլ հարցերի մասին։

1870-ական թվականների սկզբին Օսմանյան կայսրությունում «նոր օսմաններիս» շրջանում ծայր առավ տնտեսական սուր ճգնաժամ։ Թանզիմաթի ոչ լիարժեք բարեկարգումները չհաղթահարեցին կայսրության կիսաավատական և որոշ նահանգներում ավատական կարգերը, ճանապարհ չհարթեցին երկրի արտադրողական ուժերի զարգացման համար։

Տնտեսական փլուզումը առաջադրեց քաղաքական նոր ճգնաժամ, ներքին երկպառակություններ, խորը հակասություններ և հակամարտություններ։ Այդ ամենն իր կնիքը դրեց նաև հայ-քրդական հարաբերությունների վրա, որոնք լուսաբանվում են աշխատության չորրորդ գլխում («Հայ-քրդական հարաբերությունները 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և շեյխ Օբեյդուլլայի շարժման ժամանակ»)։ Այս և հաջորդ՝ հինգերորդ, գլխի ժամանակագրական շրջանակները ընդգրկում են հիմնականում սուլթան Աբդուլ Համիդ II-ի տիրապետության շրջանը, որն ամբողջությամբ վերցրած հայ-քրդական հարաբերությունների խիստ լարված, արյունալի և ողբերգական հետևանքներ ունեցող ժամանակաշրջան է։

XIX դ. վերջերից հայ-քրդական հարաբերությունները թևակոխեցին զարգացման նոր փուլ։ Այս շրջանում է, որ ընդդեմ կարմիր սուլթանի «զուլումի» վարչակարգի ուժեղ թափով ծավալվեցին հայկական ազգային-ազատագրական շարժումները, որոնք ճնշելու և արյան մեջ խեղդելու համար կառավարությունը կրկին դիմեց իր զինանոցի պահեստային ուժերին՝ քրդերին։ Այս և այլ բազմաթիվ խնդիրներն են քննարկվում աշխատության հինգերորդ գլխում («Հայ ազատագրական շարժման նոր փուլը և հայ-քրդական հարաբերությունները XIX դ. վերջին և XX դ. սկզբին»)։ Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է հայ ժողովրդի

հերոսական պայքարին, հայկական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեությանը, արևմտահայության ծանր վիճակին, Արդուլ Համիդի ազգահալած քաղաքականությանը։ Նա մասնավորապես կանգ է առնում «համիդիե» գնդերի շարագործությունների, XIX դ. 90-ական թվականների հայկական կոտորածների, միսիոներների գործունեության, քրդերի վիճակի և այլ հարցերի վրա։

Աշխատության վերջին գլխում («Հայ-քրդական հարաբերությունները երիտթուրքերի և լիբիլյաֆականների տիրապետության շրջանում») Վ. Բայբուրդյանը հանգամանորեն անդրադառնում է հայ-քրդական հարաբերություններին՝ երիտթուրքերի շրջանում։ Նա հակիրճ խոսում է 1908 թ. հեղաշրջումից հետո իշխանության գլուխ անցած երիտթուրքերի քաղաքականության, քուրդ ազգայնականների գործունեության, քրդերի խլրտումների, երիտթուրքերի կատարած վարչական փոփոխությունների, հայ-քրդական թշնամանքը հրահրելու ուղղությամբ երիտթուրքերի միջոցառումների, տերությունների դիվանագիտության, քրդական շարժումների և այլ խնդիրների մասին։ Սույն գլխում հայ-քրդական հարաբերությունները ներկայացվում են մինչև 1914 թ.՝ առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը։

Աշխատության վերջաբանում Վ. Բայբուրդյանը ընդհանուր գծերով ներկայացնում է 1915 թ. հայ ժողովրդի մեծ ցեղասպանությունը, բնութագրում թուրքական քաղաքականությունը և Թուրքիայի դիրքորոշումը Հայկական և Քրդական հարցերում, Լոզանի կոնֆերանսը, Թուրքիայի դաժան քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ, քրդերի վիճակը արդի Թուրքիայում և այլն։

Այսպիսով, Վ. Բայբուրդյանի «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում» մենագրությունը գիտական լուրջ աշխատանք է, որի կողքով անտարբեր չեն անցնի հայագիտական և քրդագիտական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետները։ Հայ-քրդական հարաբերությունների գիտական օբյեկտիվ քննությունը և նորովի լուսաբանումը լիովին հաջողվել է հեղինակին։ Այնուամենայնիվ, բացի վերևում նշված որոշ նկատառումներից, կուզենայինք հայտնել ևս մի քանի ցանկություններ, որոնք, մեր կարծիքով, ամենևին չեն նսեմացնում գրքի գիտական արժանիքը։ Նախ ասենք, որ նման աշխատությունը ցանկալի էր տեսնել անունների և առարկայական ցանկերով։ Մենագրությունը բավական ծանրաբեռնված է երկար ու կարճ մեջբերումներով։ Դրանք, անկասկած, շատ հետաքրքիր են և անհրաժեշտ, բայց շարադրանքը բեռնաթափելու համար մի մասը կարելի էր տեղափոխել ծանոթագրությունների բաժին։ Բացի այդ, քիչ են ծանոթագրությունները, թեպետ եղածները խիստ հետաքրքիր են։ Օրինակ, չափազանց հաջող է 6-րդ ծանոթագրությունը՝ Դերսիմի և այնտեղ ապրող ժողովրդի՝ զազաների մասին։ Վ. Բայբուրդյանը իրավացիորեն նշում է, որ զազաներին երբեք չպետք է դիտել որպես քրդերի մի մաս (էջ 334—335)։ Դրանք իսկապես առանձին ժողովուրդ են՝ իրենց յուրահատուկ դավանանքով, լեզվով, սովորություններով և ազգային դիմագծով[4]։

Գիտական ծանրակշիռ այս ուսումնասիրությունը չնայած հիմնականում գրված է եղել, այսպես կոչված, «լճացման» ժամանակաշրջանում, սակայն, ի պատիվ հեղինակի, միանգամայն զերծ է ժողովուրդների փոխհարաբերություններին նվիրված այդ շրջանում գրված աշխատություններին հատուկ քաղցր-մեղցր տոնայնությունից։ Գուցե այդ է պատճառը, որ այս գիրքը բավական ուշացումով ներկայացվեց գիտական հասարակայնությանը։ Նրա ռուսերեն հրատարակությունը, կարծում ենք, խիստ անհրաժեշտ է և հրատապ։

Գ. Ս. ԱՍԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Ա. Պ. ՓՈԼԱԴՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

---

4 Այդ մասին մանրամասն տե՛ս Գ. Ս. Ասատրյան, Հայ գիտաքաղաքական մտքի էջերից (Երևան, 20. III. 1990)։